Հաստատված է՝

«Ուրբան» կայուն զարգացման

Հիմնադրամի հիմնադրի

թիվ 1 որոշմամբ

Իրինա Վանյան

«9» մարտի 2004թ.

Տպագրված է ընդամենը յոթ օրինակ

Օրինակ 4

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության

իրավաբանական անձանց

պետական ռեգիստրի կենտրոնական

մասնի կողմից

«28» 04 2004թ.

Գրանցման թիվ 222160.00312

Վկայական թիվ 03U064891

պետական ռեգիստրի ղեկավար

Գ. Մարգարյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Ուրբան» կայուն զարգացման

ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԵՐԵՎԱՆ

2004թ.

Հաստատված է՝

«Ուրբան» կայուն զարգացման
հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի
2011թ. դեկտեմբերի 1-ի նիստի
որոշմամբ

Գործադիր տնօրեն Դ.Ղազախեցյան
1-ը դեկտեմբերի 2011թ.

Տպագրված է ընդամենը հինգ օրինակ
Օրինակ 4
ԳՐԱՆՑՎԱԾ Է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կենտրոնական
մարմնի կողմից 28.04.2004թ.
Գրանցման թիվ 222.160.00312
Վկայական թիվ 03Ա064891
ՀՎՀՀ 01549618
28.04.2004թ. գրանցված կանոնադրության
թիվ 002.3 փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կենտրոնական
մարմնի կողմից «22» 12 2011թ.
պետական ռեգիստրի դեկավար
Ա. Գևորգյան

«ՈՒՐԲԱՆ» ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ա) Փոփոխել «Ուրբան» կայուն զարգացման Հիմնադրամի Կանոնադրության 1.5. կետը.

1.5.«Ուրբան» Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0070, Ալեք Մանուկյան 9

բ) «Ուրբան» հիմնադրամի կանոնադրությունը լրացնել նոր 2.2.22. և 2.2.23. կետերով՝

2.2.22. Նպաստել ժողովրդավարության ամրապնդմանը ՀՀ համայնքներում՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվող որոշումների կայացման մեջ համայնքի բնակիչների մասնակցության բարձրացման, արդյունավետ կառավարման ձևերի խթանման, համայնքի բնակիչների իրազեկության բարձրացման, վերջիններիս իրավունքների ազատ իրականացման և խախտված իրավունքների պաշտպանության միջոցով:

2.2.23. Իրականացնել ժողովրդավարական արժեքների, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների քարոզչություն ու պաշտպանություն, նպաստել Հայաստանի Հանրապետությունում եվրաինտեգրման և արևելյան գործընկերության ամրապնդմանը:

ԵՐԵՎԱՆ

2011թ.

Հաստատված է՝

«Ուրբան» կայուն զարգացման
հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի
2005թ. ապրիլի 11-ի նիստի
որոշմամբ

Գործադիր տնօրեն՝ Իրինա Վանյան
13-ը ապրիլի 2005թ.

Գրանցված է ընդամենը յոթ օրինակ
Օրինակ 2.
ԳՐԱՆՑՎԱԾ է՝
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կենտրոնական
մարմնի կողմից 28.04.2005թ.
Գրանցման թիվ 222.160.00312
Վկայական թիվ 03Ա064891
թիվ 001.3. փոփոխությունը գրանցված է
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կենտրոնական
մարմնի կողմից «27» 04 2005թ
պետական ռեգիստրի ղեկավար
..... Գ. Սարգսյան

«ՈՒՐԲԱՆ» ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

«Ուրբան» կայուն զարգացման Հիմնադրամի Կանոնադրության 7.2. կետը և 7.8. կետի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ կերպ.

7.2. Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինը Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդն է: Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը կազմված է 5 (հինգ) անդամից:

7.8. կետ, երկրորդ պարբերություն. «Ուրբան» Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների ժամկետը չի սահմանափակվում:

Սույն փոփոխությունները հանդիսանում են հիմնադրամի 28.04.2004թ. գրանցված կանոնադրության բաղկացուցիչ մասը:

ԵՐԵՎԱՆ

2005թ.

ՀՈԴՎԱԾ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Ուրբան» համայնքային զարգացման Հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) քաղաքացիների կամավոր գույքային վճարների հիման վրա՝ քաղաքաշինական զարգացման, իրավական աջակցության, գիտության, կրթության, առողջապահության, մշակույթի, տնտեսական և սոցիալական, համայնքային զարգացման, ինչպես նաև այլ հանրօգուտ նպատակներով ստեղծված և անդամություն չունեցող, ոչ առևտրային, շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություն է:

1.2. Հիմնադրամը ստեղծվել է և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքին (այսուհետ՝ Օրենսգիրք), «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքին (այսուհետ՝ Օրենք), ՀՀ այլ իրավական ակտերին և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.3. Հիմնադրամի անվանումն է՝

հայերեն լրիվ՝ «» Հիմնադրամ
հայերեն կրճատ՝ « » Հիմնադրամ
անգլերեն լրիվ՝ “” Foundation
անգլերեն կրճատ՝ “” Foundation

1.4. Հիմնադրամի գործունեության ժամկետը չի սահմանափակվում:

1.5. Հիմնադրամի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Մաշտոցի պողոտա-49, բն. 7:

ՀՈԴՎԱԾ 2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

2.1. Հիմնադրամի նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետության քաղաքային տնտեսության, բնակարանային և քաղաքային ենթակառուցվածքների ֆինանսավորման, մունիցիպալ կառավարման, քաղաքային հողօգտագործման, բնակչության սոցիալական պաշտպանության, այդ գործընթացներին բնակչության մասնակցության և քաղաքի սոցիալ-տնտեսական քաղաքականության պրոբլեմների լուծման նոր մոտեցումների մշակմանը և ներդրմանը, համայնքների բնականոն զարգացմանը, տեղական ինքնակառավարման հետագա բարելավմանը:

2.2. Հիմնադրամի գործունեության առարկան և խնդիրները.

2.2.1.իրականացնել մարդասիրական և զարգացման ծրագրեր նպատակաուղղված ՀՀ համայնքների տնտեսական, քաղաքաշինական, համայնքի կառավարման հետագա զարգացման բարեփոխումների գործընթացին.

2.2.2.օժանդակել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ քաղաքային տնտեսության բարեփոխումների ծրագրերի ռազմավարության ու արդյունավետ մոտեցումների մշակման և դրանց իրացման գործում.

2.2.3.մշակել բնակարանային քաղաքականության և քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերին նվիրված նախագծեր, մասնակցել դրանց փորձաքննությանը.

2.2.4.բարելավել բնակչության՝ համակարգչային բազմաբնույթ ծրագրերից և այլ բարձր տեխնոլոգիաներից, տեղեկատվության այլ աղբյուրներից, գիտության նվաճումներից օգտվելու մատչելիությունը՝ իրենց քաղաքաշինական ծրագրերի իրականացման նպատակով.

2.2.4.անցկացնել քաղաքային տարածքների սոցիալական և տնտեսական պրոբլեմներին նվիրված հետազոտություններ, գիտա-մեթոդական օգնություն ցուցաբերել համայնքներին. իրավաբանական ու ֆիզիկական անձանց.
2.2.5.մշակել և իրականացնել քաղաքաշինական խնդիրներին ուղղված բնակչության իրազեկության բարձրացման միջոցառումներ և ծրագրեր.
2.2.6.մատուցել խորհրդատվություն իրավաբանական ու ֆիզիկական անձանց՝ քաղաքային էկոնոմիկայի և բնակարանային շուկայի զարգացման հարցերի վերաբերյալ.
2.2.7.բարձրացնել մարդկանց իրազեկությունը իրենց քաղաքաշինական իրավունքների ճանաչման, ազատ իրականացման և պահպանության բնագավառում, մասնավորապես՝ գիտելիքներով զինել անհատ կառուցապատողներին, հողօգտագործողներին, հողաշինարարներին, անշարժ գույքի շուկայի այլ սուբյեկտներին.
2.2.8.խթանել քաղաքաշինական գործունեության ապահովության նոր մեթոդների ու մեխանիզմների ներդրումը, այդ բնագավառի աշխատողների ուսուցումը և մասնագետների վերապատրաստումը.
2.2.9.իրականացնել վարկային և դրամաշնորհային ծրագրեր՝ ուղղված քաղաքային տնտեսության զարգացմանը, քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը
2.2.10.նպաստել համայնքների գլխավոր հատակագծերի, համայնքների գոտևորման և հողօգտագործման սխեմաների նախապատրաստմանը.
2.2.11.զարգացնել համայնքների աշխատակազմի, համայնքային ծառայություններ մատուցող կազմակերպությունների աշխատողների և այլ շահառուների համակարգչային գիտելիքները, մասնագիտական և այլ աշխատանքային հմտությունները՝ աշխատանքի շուկայում մրցունակ լինելու համար.
2.2.12.աջակցել ոչ առևտրային, ոչ պետական և համայնքային կազմակերպություններին՝ կազմակերպչական և ֆինանսական կառավարման, կարևորագույն որոշումների ընդունմանը նրանց մասնակցության և լիդերության ապահովման գործընթացներին.
2.2.13.կազմակերպել և անցկացնել հետազոտություններ, արդյունքները տպագրել կամ հրատարակել ցանկացած ձևով.
2.2.14.տրամադրել գնումների հետ կապված խորհրդատվություն քաղաքաշինական ծրագրերի իրականացման ոլորտում.
2.2.15.տալ դրամաշնորհներ ֆիզիկական ու իրավաբանական անձանց, ստանալ դրամաշնորհներ և ղեկավարել դրամաշնորհային ծրագրեր այլ կազմակերպությունների հետ.
2.2.16.իրականացնել ենթակառուցվածքների վերականգնման և շինարարության աջակցման ծրագրեր.
2.2.17.լուսաբանել և տարածել համաշխարհային գիտական, գրական մտքի արժեքավոր նմուշները. մասնավորապես քաղաքային տնտեսության կառավարման ոլորտի վերաբերյալ.
2.2.19.իրականացնել ՀՀ համայնքների տնտեսական ընդհանուր զարգացմանը նպատակաուղղված ծրագրեր.
2.2.20.իրականացնել միկրոֆինանսավորման և վարկային ծրագրեր՝ նպատակաուղղված բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և եկամուտների ստացմանը.

2.3 Հիմնադրամի հնարավոր շահառուներն են Հայաստանի Հանրապետությունը, ՀՀ համայնքները, ՀՀ ոչ առևտրային կազմակերպությունները, իսկ առանձին դեպքերում՝ նաև առևտրային կազմակերպությունները և/կամ անհատ ձեռնարկատերերը, որոնք գործունեություն են իրականացնում քաղաքաշինության, համայնքային զարգացման

բնագավառներում և/կամ որոնց գործունեությունը համահունչ է Հիմնադրամի կանոնադրական խնդիրների իրականացմանը:

ՀՈԴՎԱԾ 3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

3.1. Հիմնադրամը պետական գրանցման պահից ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

3.2. Հիմնադրամն ունի ինքնուրույն հաշվեկշիռ: Հիմնադրամը կարող է հաշվարկային և այլ հաշիվներ բացել բանկերում:

3.3. Հիմնադրամն ունի իր անվանմամբ կլոր կնիք (հայերեն և անգլերեն լեզուներով), դրոշմակնիք և ձևաթղթեր: Հիմնադրամը կարող է ունենալ նաև խորհրդանիշ: Հիմնադրամը, ՀՀ օրենքներով սահմանված կարգով, անհատականացման միջոցներ ունենալու և դրանք պաշտպանելու իրավունք ունի:

3.4. Հիմնադրամն ունի սեփական առանձնացված գույք, կարող է իր անունից մասնակցել գույքային շրջանառությանը, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ և դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

3.5. Հիմնադրամն իրավունք ունի ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ դրամաշնորհներ, նվիրաբերություններ, նվիրատվություններ, ինչպես նաև գույք ձեռք բերել օրենքով չարգելված ցանկացած եղանակով:

3.6. Օտարել, վարձակալության տալ Հիմնադրամին սեփականության իրավունքով պատկանող գույքը:

3.7. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև ներմուծել արտասահմանում օրինական ճանապարհով ձեռք բերված գույքը, հաստատել միջազգային կապեր, իր կանոնադրական նպատակների իրականացման համար համագործակցել օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների հետ, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել Հայաստանի Հանրապետության, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից, մատուցած ծառայություններից:

3.8. Ինքնուրույն որոշել Հիմնադրամի կազմակերպական կառուցվածքը, ստորաբաժանումների թիվը և կառավարման համակարգը:

3.9.Հիմնադրամն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն սեփականության իրավունքով պատկանող ամբողջ գույքով:

3.10.Հիմնադրամի հիմնադիրների՝ Հիմնադրամին հանձնած գույքը Հիմնադրամի սեփականությունն է: Հիմնադրամն իրավունք ունի տիրապետել, օգտագործել և տնօրինել իրեն պատկանող գույքը՝ սույն կանոնադրությամբ սահմանված նպատակներով:

3.11.Հիմնադրամը պատասխանատվություն չի կրում իր հիմնադիրների պարտավորությունների, իսկ հիմնադիրները պատասխանատվություն չեն կրում Հիմնադրամի պարտավորությունների համար: Հիմնադրամի հիմնադիրները համապարտ պատասխանատվություն են կրում մինչև հիմնադրամի պետական գրանցումը ծագած՝ նրա ստեղծման հետ կապված պարտավորությունների համար:

3.12. Հիմնադրամը պարտավոր է օրենքով սահմանված ժամկետներում և կարգով հաշվետվություն հրապարակել իր գույքի օգտագործման մասին:

3.13. Հիմնադրամի գործունեության արդյունքում ստացված եկամուտը չի կարող հանձնվել կամ տրվել նրա հիմնադիրներին:

3.14. Հիմնադրամն իրավունք ունի ստեղծել ներկայացուցչություններ, մասնաճյուղեր և հիմնարկներ:

3.15.Հիմնադրամն իրականացնում է իր գործունեությունը ժողովրդավարության, օրինականության, արդարության, մարդասիրության, կամավորության և հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

3.16. Իր կանոնադրական նպատակներն իրականացնելու համար Հիմնադրամն իրավունք ունի հիմնադրել տնտեսական ընկերություններ և (կամ) մասնակցել դրանցում, լինել վստահության վրա հիմնված ընկերակցության ավանդատու:

3.17. Հիմնադրամը ձեռնարկատիրական գործունեություն կարող է իրականացնել ինքնուրույն կամ այդ նպատակով ստեղծել տնտեսական ընկերություններ կամ լինել դրանց մասնակից:

3.18. Հիմնադրամն իրավունք ունի զբաղվել, բացառապես, սույն կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակներով, մասնավորապես՝

ա) մատուցել վճարովի ծառայություններ և խորհրդատվություն,

բ) կրթության մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել վճարովի ուսուցման, վերապատրաստման և/կամ որակավորման բարձրացման դասընթացներ,

գ) իրականացնել հրատարակչական գործունեություն և հրատարակված նյութերի վաճառք,

դ) իրականացնել անկախ փորձագիտական գործունեություն համայնքային զարգացման բնագավառում,

ե) իրականացնել քաղաքաշինության և համայնքային զարգացման բնագավառներում ՀՀ իրավական և ինստիտուցիոնալ համակարգերի բարեփոխումներին ուղղված գործունեություն,

զ) ստեղծել և վաճառել տեղեկատվական ծրագրեր և ծրագրավորման այլ նյութեր, մասնավորապես՝ ուղղված համայնքների գոտևորման, գլխավոր հատակագծերի կազմավորման և քաղաքաշինական զարգացմանը

է)կազմակերպել ցուցահանդեսներ, ցուցահանդես վաճառքներ, կլոր սեղաններ, սեմինարներ, կոնֆերանսներ, գիտաժողովներ

ը) ստեղծել և թողարկել հեռուստատեսային ծրագրեր, վաճառել գովազդներ,

թ) ձեռք բերել, վաճառել և փոխադրել ապրանքներ,

ՀՈԴՎԱԾ 4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ, ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ

4.1. Հիմնադրամն իրավունք ունի Օրենսգրքի, Օրենքի, ՀՀ այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջներին համապատասխան՝ ստեղծել մասնաճյուղեր, ներկայացուցչություններ և հիմնարկներ:

4.2.Հիմնադրամի կողմից օտարերկրյա պետություններում մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումն իրականացվում է մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների գտնվելու վայրի երկրի օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան, եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

4.3. Ներկայացուցչությունը Հիմնադրամի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումն է, որը ներկայացնում է Հիմնադրամի շահերը և իրականացնում դրանց պաշտպանությունը:

4.4. Մասնաճյուղը Հիմնադրամի գտնվելու վայրից դուրս տեղակայված նրա առանձնացված ստորաբաժանումն է, որն իրականացնում է նրա բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը՝ ներառյալ ներկայացուցչության գործառույթները:

4.5. Հիմնարկը կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Հիմնադրամի ստեղծած կազմակերպությունն է:

4.6. Ներկայացուցչությունները, մասնաճյուղերը և հիմնարկներն իրավաբանական անձինք չեն ու գործում են Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված կանոնադրությունների հիման վրա:

4.7. Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և հիմնարկների գույքը տրամադրվում է Հիմնադրամի կողմից: Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և հիմնարկների գույքի արժեքն արտացոլվում է ինչպես դրանց առանձին հաշվեկշիռներում, այնպես էլ՝ Հիմնադրամի հաշվեկշռում և համարվում է Հիմնադրամի սեփականությունը:

4.8. Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և հիմնարկների ղեկավարները նշանակվում են Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի կողմից ու գործում են նրա տված լիազորագրերի հիման վրա:

4.9. Ներկայացուցչությունների, մասնաճյուղերի և հիմնարկների գործունեության համար գույքային պատասխանատվություն է կրում Հիմնադրամը:

4.10. Հիմնադրամն իրավունք ունի ստեղծել առևտրային կազմակերպություն կամ լինել դրա մասնակիցը:

4.11. Իր խնդիրների պատշաճ իրականացման նպատակով Հիմնադրամն իրավունք ունի ստեղծել հանձնաժողովներ և խորհրդատվական այլ մարմիններ:

ՀՈԴՎԱԾ 5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

5.1. Հիմնադրամը որպես սեփականություն կարող է ունենալ շենքեր, շինություններ, բնակելի տներ և բնակարաններ, սարքավորումներ, տրանսպորտային միջոցներ, դրամական միջոցներ՝ դրամով և արտարժույթով, արժեթղթեր և այլ անշարժ կամ շարժական գույք:

5.2. Հիմնադրամի գույքի արժեքն արտացոլվում է Հիմնադրամի ինքնուրույն հաշվեկշռում:

5.3. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուրներն են՝

5.3.1. Հիմնադրամի հիմնադրի կանոնավոր և (կամ) միանվագ գույքային վճարները և (կամ) ներդրումները.

5.3.2.Օտարերկրյա պետություններից, օտարերկրյա և հայաստանյան կազմակերպություններից, ինչպես նաև միջազգային կազմակերպություններից ստացված դրամաշնորհները.

5.3.3. Այլ անձանց նվիրաբերությունները.

5.3.4. Արժեթղթերից, բաժնեմասերից, ինչպես նաև ավանդներից ստացված շահույթը (տոկոսները).

5.3.5. Հիմնադրամի կողմից իրականացված ձեռնարկատիրական գործունեությունից ստացված եկամուտները.

5.3.6. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ձևերով ձեռք բերած այլ գույքը:

5.4. Հիմնադրամի հիմնադիրների կողմից հիմնադրամին հանձնված գույքի սկզբնական չափը կազմում է 50.000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

5.5. Հիմնադրամի գույքը տնօրինվում և կառավարվում է հիմնադրամի մարմինների կողմից՝ սույն կանոնադրությամբ, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ: ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Հիմնադրամի հիմնադիրն է՝
Իրինա Վանյանը, անձնագիր՝ AA0366005, կոդ՝ 010, տրված 17/04/1996թ. հասցեն՝ ք. Երևան, Մաշտոցի պող. 49, բն. 7, հեռ. (3741) 56-28-98; (3749) 40-37-16; էլ.փոստ՝ ivanyan@urbaninstitute.am

6.2. Հիմնադրամի հիմնադիրն իրավունք ունի՝

6.2.1. տեղեկություններ ստանալ Հիմնադրամի գործունեության հետ կապված բոլոր հարցերի վերաբերյալ.

6.2.2.ծանոթանալ Հիմնադրամի հաշվապահական հաշվետվություններին և փաստաթղթերին Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի թույլտվությամբ.

6.2.4. մասնակցել Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նիստին՝ նախապես ստանալով Հոգաբարձուների խորհրդի թույլտվությունը.

6.2.5.Հոգաբարձուների խորհրդի համաձայնությամբ առաջիկա նիստի օրակարգ մտցնել իր կողմից առաջադրված հարցեր կամ նախագծեր.

6.2.7.լինել Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի անդամ: Այդ դեպքում հիմնադիրն օգտվում է Հոգաբարձուների խորհրդի անդամի համար սահմանված իրավունքներից և կրում է Հոգաբարձուների խորհրդի անդամի համար սահմանված պարտականությունները.

ՀՈԴՎԱԾ 7. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ: ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

7.1. Հիմնադրամի կառավարման մարմիններն են Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը և Հիմնադրամի գործադիր տնօրենը.

7.2. Հիմնադրամի կառավարման բարձրագույն մարմինը Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդն է: Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը կազմված է 3(երեք) անդամից.

7.3. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդն իրավասու է լուծել Հիմնադրամի գործունեության հետ կապված ցանկացած հարց.

7.4. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

7.4.1. Հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը.

7.4.2.Հիմնադրամի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան ֆինանսական հաշվետվությունների և հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունների հաստատումը.

7.4.3. Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը.

7.4.4. Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը.

7.4.5. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նոր անդամների ընտրությունը և հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը.

7.4.6.Հոգաբարձուների խորհրդի նախագահի, գործադիր տնօրենի (կառավարչի) և կանոնադրությամբ սահմանված այլ մարմինների ընտրության և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարման մասին որոշումների ընդունումը.

7.4.7. Հիմնադրամի՝ կանոնադրությամբ նախատեսված այլ մարմինների ձևավորումը.

7.4.8. Հիմնադրամի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը.

7.4.9. Տնտեսական ընկերությունների ստեղծման կամ դրանցում մասնակցության, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների մասին որոշումների ընդունումը.

7.4.10. Հիմնադրամի ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումը.

7.4.11. Սույն կանոնադրությամբ կամ Հոգաբարձուների խորհրդի կողմից սահմանված պարբերականությամբ գործադիր տնօրենի հաշվետվությունների լսումը.

7.4.12. Իր որոշումների կատարման ընթացքի վերահսկումը.

7.4.13. Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը.

7.4.14. Գործադիր տնօրենի ընտրությունը և հեռացումը.

7.4.15. Օրենքով, սույն կանոնադրությամբ, ինչպես նաև հիմնադրամի այլ մարմիններին չվերապահված այլ լիազորությունների իրականացումը.

7.5.Հոգաբարձուների խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերը հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

7.6. Հոգաբարձուների խորհուրդն իրավունք ունի ծանոթանալու հիմնադրամի բոլոր փաստաթղթերին:

7.7. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը վերահսկողություն է իրականացնում Հիմնադրամի գույքի նպատակային օգտագործման, ինչպես նաև Հիմնադրամի գործադիր տնօրենի գործունեության նկատմամբ:

7.8. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի առաջին կազմի անդամներին նշանակում է (են) Հիմնադրամի հիմնադիրը (հիմնադիրները՝ բոլոր հիմնադիրների փոխադարձ համաձայնությամբ):

Հիմնադրամի Հոգարբարձուների խորհրդի անդամները նշանակվում են 3 (երեք) տարի ժամանակով:

Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդն իր կազմից առնվազն 1 (մեկ) տարի ժամանակով ընտրում է խորհրդի նախագահ, որը համակարգում է խորհրդի աշխատանքները և վարում խորհրդի նիստերը:

7.9. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նիստերն անցկացվում են առնվազն տարին մեկ անգամ յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 40 (քառասուն) օրվա ընթացքում:

Հոգաբարձուների խորհրդի մեկ անդամի պահանջով՝ եռամսյակն ավարտվելուց հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում գումարվում է Հոգաբարձուների խորհրդի նիստ:

7.10. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի անդամների 1/3-ի պահանջով Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նախագահը 30 (երեսուն) օրվա ընթացքում գումարում և անցկացնում է արտահերթ նիստ:

7.11. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդում որոշումներն ընդունվում են խորհրդի կողմից սահմանված կարգով՝ բաց կամ գաղտնի քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ:

7.12. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդում քվեարկության ժամանակ յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

7.13. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նիստերը գումարվում և անցկացվում են Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ սահմանված կարգով: Հոգաբարձուների խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի կամ կապի այլ միջոցների կիրառմամբ:

7.14. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի անդամի լիազորությունները խորհրդի մյուս անդամների կողմից կարող են դադարեցվել.

1) նրա գրավոր դիմումի հիման վրա.

2) նրա կողմից իր պարտականությունները պատշաճ չկատարելու դեպքում՝ Հոգաբարձուների խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ով.

3) լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում:

7.15. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նախագահի լիազորությունները Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների կողմից կարող են դադարեցվել, եթե՝

1) լրացել է սույն կանոնադրությամբ սահմանված նրա լիազորությունների ժամկետը.

2) հրաժարական է ներկայացրել.

3) հարգելի պատճառներով չի կարող իրականացնել իր լիազորությունները:

4) Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի անդամների կողմից ընդունվել է Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նախագահի լիազորությունների դադարեցման մասին որոշում՝ վերջինիս անգործության կամ անհրաժեշտ բարեխղճության բացակայության դեպքում:

7.16.Հոգաբարձուների խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները՝ Հոգաբարձուների խորհրդի որոշմամբ, կատարում է անդամներից մեկը:

ՀՈԴՎԱԾ 8. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԸ

8.1. Հիմնադրամի գործադիր տնօրենը վարում է Հիմնադրամի ընթացիկ գործերը և հաշվետու է Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի առաջ:

8.2. Հիմնադրամի գործադիր տնօրենն Հոգաբարձուների խորհրդի և իր միջև կնքված կառավարման պայմանագրի համաձայն իրավունք ունի՝

8.2.1. առանց լիազորագրի հանդես գալ Հիմնադրամի անունից.

8.2.2. կառավարման պայմանագրով սահմանված շրջանակներում տնօրինել Հիմնադրամի գույքը, ներառյալ՝ ֆինանսական միջոցները.

8.2.3. կառավարման պայմանագրով սահմանված շրջանակներում Հիմնադրամի անունից կնքել և կատարել գործարքներ.

8.2.4. տալ լիազորագրեր.

8.2.5. Հիմնադրամի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով ձևավորել իր աշխատակազմը, արձակել հրամաններ, տալ կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկել դրանց կատարումը.

8.2.6. լուծել Հիմնադրամի ընթացիկ գործունեության հետ կապված այլ հարցեր.

8.2.7. Հիմնադրամի հիմնադիրների որոշմամբ՝ Հոգաբարձուների խորհրդի և գործադիր տնօրենի միջև կնքված կառավարման պայմանագրով՝ Հիմնադրամի գործադիր տնօրենին կարող են վերապահվել նաև այլ իրավունքներ:

8.3. Հիմնադրամի գործադիր տնօրենը պարտավոր է՝

8.3.1. Հիմնադրամի գործունեության մասին հաշվետվություն ներկայացնել Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին.

8.3.2. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի հաստատմանը ներկայացնել Հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվությունները և հաշվապահական հաշվեկշիռները.

8.3.4. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի պահանջով տրամադրել Հիմնադրամի գործունեության վերաբերյալ ցանկացած ֆինանսական, հաշվապահական կամ այլ փաստաթուղթ և (կամ) տեղեկատվություն.

8.3.5. Օրենքով սահմանված դեպքերում և կարգով և/կամ Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի պահանջով զանգվածային լրատվության միջոցներով տարեկան հաշվետվություն հրապարակել Հիմնադրամի գույքի օգտագործման մասին:

ՀՈԴՎԱԾ 9. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼԸ ԵՎ ԴՐԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

9.1. Հիմնադրամի կանոնադրությունում փոփոխությունները և լրացումները կատարվում են Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ:

9.2. Եթե Հիմնադրամի կանոնադրությունն անփոփոխ պահելը հանգեցնում է այնպիսի հետևանքների, որոնք հնարավոր չէր կանխատեսել Հիմնադրամն ստեղծելիս, իսկ Հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը չի փոփոխում Հիմնադրամի կանոնադրությունը, ապա Հիմնադրամի կանոնադրությունում փոփոխությունները կարող

են կատարվել դատարանի կողմից՝ Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի անդամի կամ գործադիր տնօրենի դիմումի հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 10. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

10.1. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի յուրաքանչյուր անդամ յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո՝ 10 (տաս) օրվա ընթացքում իրավունք ունի Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նիստի օրակարգի վերաբերյալ ներկայացնել ցանկացած թվով առաջարկներ:

10.2. Օրակարգի վերաբերյալ առաջարկները ներկայացվում են գրավոր՝ նշելով անդամի անունը, ազգանունը (անվանումը) և առաջարկի հիմքերը:

10.3. Հիմնադրամի գործադիր տնօրենը կազմում և Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամներին է տրամադրում եռամսյակային նիստի օրակարգը և օրակարգին առնչվող փաստաթղթերը (դրանց պատճենները), ինչպես նաև սահմանում է նիստի գումարման տարին, ամիսը և ամսաթիվը:

10.4. Հոգաբարձուների խորհրդի տարեկան նիստերը նույնպես գումարվում են սույն հոդվածով սահմանված կարգով:

ՀՈԴՎԱԾ 11. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԵՐԸ

11.1. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստերը կարող են գումարվել Հիմնադրամի գործադիր տնօրենի նախաձեռնությամբ, ինչպես նաև Հոգաբարձուների խորհրդի անդամների առնվազն 1/3-ի պահանջով՝ նախաձեռնողի օրակարգով:

11.2. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստերը գումարվում են պահանջը ներկայացնելու պահից՝ ոչ ուշ քան 15 (տասնհինգ) օրվա ընթացքում:

11.3. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստի օրակարգը և օրակարգին վերաբերող փաստաթղթերը (դրանց պատճենները) Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի անդամներին է տրամադրում նախաձեռնողը՝ արտահերթ նիստ գումարելու մասին պահանջ ներկայացնելու պահից՝ հինգ օրվա ընթացքում:

11.4. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստերը գումարվում են սույն կանոնադրության պահանջներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 12. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12.1. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նիստերի արձանագրությունները կազմվում են դրանց ավարտից հետո՝ ոչ ուշ, քան հինգ օրվա ընթացքում:

12.2. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նիստի արձանագրությունն ստորագրում են Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամները

12.3. Նիստերի արձանագրության մեջ նշվում են՝

12.3.1. նիստի անցկացման տեղը, տարին, ամիսը և ամսաթիվը.

12.3.2. նիստի օրակարգը.

12.3.3. նիստին ներկա անդամների անունները, ազգանունները.

12.3.4. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի անդամների ելույթների համառոտ բովանդակությունը, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, ընդունված որոշումները.

12.3.5. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նիստին բացակա անդամի (ների) անունը (ները), ազգանունը (ները), նրա (նրանց) դիրքորոշումը (ները) քվեարկության դրված հարցերի վերաբերյալ՝ դրանց առկայության դեպքում: Բացակա անդամների գրավոր պատասխանը (ները) կցվում է (են) նիստի արձանագրությանը:

ՀՈԴՎԱԾ 13. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

13.1. Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վարում է հաշվապահական հաշվառում և ներկայացնում է ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություններ:

13.2. Հիմնադրամի գործադիր տնօրենը պատասխանատվություն է կրում Հիմնադրամի հաշվապահական հաշվառման կազմակերպման վիճակի և դրա հավաստիության, տարեկան հաշվետվությունը, ֆինանսական և վիճակագրական հաշվետվությունները պետական մարմիններին ժամանակին ներկայացնելու, ինչպես նաև Հիմնադրամի պարտատերերին և զանգվածային լրատվության միջոցներին Հիմնադրամի մասին տրամադրվող տեղեկությունների համար:

13.3. Հիմնադրամի վարչա-կառավարչական ծախսերի չափը սահմանել Հիմնադրամի ընդհանուր ծախսերի 20%-ը:

13.4. Հիմնադրամը պետք է ունենա ֆինանսական և հաշվապահական գիրք, որը պետք է ամփոփի այս բնագավառում կիրառվող պրոցեդուրաները, գործընթացները, ինչպես նաև այն պետք է ներառի վարչական (ադմինիստրացիոն) և աշխատանքային ուղեցույցները:

ՀՈԴՎԱԾ 14. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14.1. Հիմնադրամի աշխատակիցների և Հիմնադրամի միջև աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են աշխատանքային և/կամ քաղաքացիական օրենսդրության նորմերով և կարող են ձևակերպվել, ինչպես աշխատանքային, այնպես էլ քաղաքացիաիրավական պայմանագրերի ձևով:

14.2. Հիմնադրամն իրավունք ունի աշխատողներ ներգրավել համատեղության կարգով:

14.3. Հիմնադրամի գործադիր տնօրենն ապահովում է օրենքով երաշխավորված աշխատանքի վարձատրության նվազագույն չափը, աշխատանքային բավարար պայմանները:

ՀՈԴՎԱԾ 15. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

15.1. Հիմնադրամի գործադիր տնօրենը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետների ընթացքում պահպանել՝

15.1.1. Հիմնադրամի կանոնադրությունը, ինչպես նաև կանոնադրության մեջ կատարված փոփոխությունները եւ լրացումները.

15.1.2. Հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նիստերի արձանագրությունները.

15.1.3. Հիմնադրամի պետական գրանցումը հավաստող փաստաթղթերը.

15.1.4. Հիմնադրամի հաշվեկշռում գտնվող գույքի նկատմամբ Հիմնադրամի իրավունքը հաստատող փաստաթղթերը.

15.1.5. Հիմնադրամի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների եւ հիմնարկների կանոնադրությունները.

15.1.6. Հիմնադրամի տարեկան հաշվետվությունները.

15.1.7. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ փաստաթղթեր:

15.2. Վերը թվարկված բոլոր փաստաթղթերը պահվում են Հիմնադրամի գրասենյակում, գործադիր տնօրենի պատասխանատվությամբ:

ՀՈԴՎԱԾ 16. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

16.1. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել և/կամ լուծարվել ՀՀ Քաղաքացիական Օրենսգրքով, Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

16.2. Հիմնադրամի լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է առանց նրա իրավունքներն ու պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

16.3. Հիմնադրամը լուծարելու մասին որոշում կարող է ընդունել միայն դատարանը՝ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված շահագրգիռ անձանց դիմումով:

16.4. Հիմնադրամը կարող է լուծարվել՝

16.4.1. եթե Հիմնադրամի գույքը բավարար չէ նրա գործունեության իրականացման համար և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորությունն իրական չէ.

16.4.2. եթե հնարավոր չէ հասնել Հիմնադրամի նպատակներին և հնարավոր չէ կատարել այդ նպատակների անհրաժեշտ փոփոխություններ.

16.4.3. Հիմնադրամի կողմից իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներից շեղվելու դեպքում.

16.4.4. դատարանի կողմից Հիմնադրամի գրանցումն անվավեր ճանաչելու դեպքում.

16.4.5. եթե Հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ կամ պարբերաբար իրականացրել է իր կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն.

16.4.6. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքերով:

16.5. Հիմնադրամի լուծարային հանձնաժողովը նշանակում է դատարանը:

16.6. Լուծարային հանձնաժողովի նշանակման պահից նրան են անցնում Հիմնադրամի կառավարման լիազորությունները:

Լուծարային հանձնաժողովը Հիմնադրամի անունից հանդես է գալիս դատարանում:

16.7. Լուծարային հանձնաժողովը զանգվածային լրատվության միջոցներով տեղեկություններ է հրապարակում Հիմնադրամի լուծարման, ինչպես նաև պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի և կարգի մասին: Այդ ժամկետը չի կարող 2 (երկու) ամսից պակաս լինել:

16.8. Պարտատերերի կողմից պահանջները ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո լուծարային հանձնաժողովը կազմում է միջանկյալ լուծարային հաշվեկշիռ, որում տեղեկություններ են պարունակվում լուծարվող Հիմնադրամի գույքի կազմի, պարտատերերի պահանջների և դրանց քննարկման արդյունքների վերաբերյալ:

Միջանկյալ հաշվեկշիռը հաստատում է դատարանը:

16.9. Դրամական միջոցների վճարումը պարտատերերին կատարվում է լուծարային հանձնաժողովի կողմից լուծարային միջանկյալ հաշվեկշռին համապատասխան:

16.10. Պարտատերերի հետ հաշվարկները կատարելուց հետո լուծարային հանձնաժողովը կազմում է լուծարային հաշվեկշիռը, որը հաստատում է դատարանը:

16.11. Պարտատերերի հետ հաշվարկները կատարելուց հետո Հիմնադրամի տրամադրության տակ մնացած գույքը լուծարային հանձնաժողովի կողմից ուղղվում է Հիմնադրամի կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, իսկ դրա անհնարինության դեպքում փոխանցվում է պետական բյուջե:

16.12. Հիմնադրամը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած, այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրառում կատարելու պահից: